Հաստատված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 29.08.2017թ.

թիվ 6193/26 հրամանով

Ընդունված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 29.08.2017թ.

թիվ 43 նիստում

ռեկտոր՝ Մ.Ա. Աստաբացյան

(ստորագրություն)

ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ

(վերահաստատված)

Երեւան 2017

Ուսանողը իրավունք ունի բողոք ներկայացնել ինստիտուտի ուսումնական գործընթացի հրամանների, կարգադրությունների եւ այլ խնդիրների վերաբերյալ, որոնք սահմանափակում կամ խախտում են ուսանողի իրավունքը: Բուհի ղեկավարությունը քննարկում է ուսանողի պահանջը համապատասխան ՀՀ օրենսդրական, ենթաօրենսդրական նորմերի եւ ինստիտուտի կանոնակարգի:

Ուսանողը բողոքը կարող է ներկայացնել գրավոր կամ բանավոր ձեւով: Բողոքի ներկայացման ժամկետները սահմանափակված չեն: Գրավոր բողոքը պարտադիր կարգով պետք է ստորագրված լինի:

Բողոքի դիտարկման ժամկետը 1 ամիս է: Այ դեպքերում, երբ կա անհրաժեշտություն հավելյալ ստուգումների բողոքի դիտարկման ժամկետը ռեկտորի հրամանով կարող էերկարաձգվել եւս 1 ամսով: Դիմում-բողոքների դիտարկումը կարող է լինել վարչական եւ դատական կարգով: Բոլոր այն դեպքերը, երբ խախտվել է օրենքը, ուսանողի քաղաքացիական իրավունքները եւ ինստիտուտի սահմաններում եւ խնդիրը չի ստանում ուսանողին բավարարող լուծում, ուսանողը իրավունք ունի գանգատվել դատական կարգով: Դիմում բողոքի լուծման վերաբերյալ ինստիտուտի ղեկավարությունը պարտավոր է գրավոր կերպով հայտնել ուսանողին դիմումը ներկայացնելու օրվանից ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: